ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.1-րդ հոդվածը շարադրել նոր բովանդակությամբ՝

1. «Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրիկամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի նվազեցում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։

2. Հայտարարագիրըկամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում,

3. Սույն հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ օրենքով սահմանված կարգով նախազգուշացվելուց հետո տասնհինգօրյա ժամկետում այն պարտականության չկատարելը, որի համար նշանակվել էր վարչական տույժ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով։

4. Սույն հոդվածի երրորդ կամ սույն պարբերությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումից հետո սույն հոդվածի երրորդ պարբերությամբ նախատեսված որևէ խախտման կատարումը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։»։

Հոդված 2. Օրենսգրքի 170.3 հոդվածը շարադրել նոր բովանդակությամբ՝

«1. Հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները

սահմանված ժամկետներում չվճարելը՝

առաջացնում է նախազգուշացում,

2. Սույն հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ օրենքով սահմանված կարգով նախազգուշացվելուց հետո երեսունօրյա ժամկետում այն պարտավորության չկատարումը, որի համար նշանակվել էր վարչական տույժ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով:

3. Սույն հոդվածի երկրորդ կամ սույն պարբերությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումից հետո սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված որևէ խախտման կատարումը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հոդված 4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարած իրավախախտումները քննվում են և դրանց համար պատասխանատվության միջոցները կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգով և սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրավախախտման համար կատարված գործի առաջին վարույթը համարվում է որպես սույն օրենքի իմաստով խախտման առաջին դեպք:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։